Աշխատաժողովի հարգելի մասնակիցներ, հարգելի գործընկերներ, տիկնայք և պարոնայք

Ողջունում եմ Ձեզ և օգտվելով առիթից շնորհակալություն եմ հայտնում Միավորված ազգերի կազմակերպությանը, մասնավորապես՝ Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովին և Եվրոպական տնտեսական հանձնաժողովին կատարված աշխատանքի և շարունակական աջակցության համար:

Այսօրվա միջոցառման կազմակերպումը ևս մեկ անգամ փաստում է ՄԱԿ-ի կառույցների և մեր միջև առկա և շարունակաբար ընդլայնվող համագործակցության մասին: Ավելորդ չեմ համարում, մեկ անգամ ևս փաստել, որ Միավորված ազգերի կազմակերպության կողմից շարունակական աջակցություն է ցուցաբերվում Հայաստանի էներգետիկայի բնագավառին, մասնավորապես էներգետիկ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխումներին և տեխնիկական խնդիրների լուծմանը, վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից էներգետիկայի բնագավառին առնչվող բոլոր որոշումների կայացման, հարևան երկրների հետ հարաբերությունների կառուցման, ավելի գլոբալ էներգետիկ շուկաներին ինտեգրման և հիմնական գործընկերների հետ հարաբերությունների զարգացման հիմքում ընկած է 2021թ. հունվարի 14-ին ընդունված ՀՀ էներգետիկայի բնագավառի մինչև 2040 թվականի զարգացման ռազմավարական ծրագրում ներկայացված էներգետիկայի բնագավառի զարգացման տեսլականը. էներգետիկան պետք է լինի հուսալի և անվտանգ, կայուն զարգացող/մաքուր և էներգախնայող, կանխատեսելի և

թափանցիկ, տարածաշրջանային նշանակության, հասանելի և արդարացի բոլորի համար, բավարար չափով մատչելի խոցելի խավի, ինչպես նաև գրավիչ ներդրողների համար՝ թվայնացված և ինովացիոն:

Այսօրվա աշխատանքային հանդիպումը կենսական հնարավորություն է քննարկելու բոլորիս առջև Կովիդ-19 համավարակից հետո առջև ծառացած խնդիրները, կիսելու դրանք հաղթահարելու ուղիները, համընդհանուր լավագույն փորձը, քանի որ Հայաստանը ևս անմասն չմնաց այդ աղետից: Երկարաժամկետ կանաչ ռազմավարությունների մշակումը և համապատասխան մեխանիզմների իրականացումն այն ուղիներն են, որոնք համաձայնեցվել են Փարիզում և COP հետագա հանդիպումների ընթացքում, ուղղված են կասեցնելու արագ տաքացումը և հաղթահարելու կլիմայի փոփոխությունները, իրականացնելու ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները: Այստեղ ևս կարևորվում են և իրենց ուրույն տեղն ունեն էներգետիկ ծրագրերը և գործիքները, այդ թվում՝ NEXSTEP-ը, որոնք բերելու են նպատակ 7-ով սահմանված մատչելի, մաքուր, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիակյի հասանելիության ապահովումը բոլորի համար:

Թույլ տվեք Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անունից ողջունել հանդիպման բոլոր մասնակիցներին և մաղթել արդյունավետ աշխատանք:

Ակնկալում եմ, որ այսօրվա մեր քննարկումները էլ ավելի կխորացնեն մեր համագործակցությունը: